ՎԱՀԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԻ «ԶՐՈՒՑԱՐԱՆԸ»

Բ. Ուլուբաբյանի «Զրուցարան» արժեքավոր ուսումնասիրության Ա գիրքը ավելի քան հինգ հազար տարեկան մեր ժողովրդի պատմությունը ներկայացնող ծաղկաքաղ է: ՀՍՍՀ պետական մրցանակի արժանացած այս արժեքավոր գրքի նյութ են ծառայել մեր պատմության հատկապես այն դրվագները, որոնք ժողովրդի գոյատևման հիմքերն են:

Բ. Ուլուբաբյանը «Զրուցարանի» հենց առաջաբանում բացահայտել է գիրքը գրելու շարժառիթները. «Այս գիրքը ծնվել է իբրև պատասխանը մի հարցի, որն առեղծված է թվում մեր անցյալին ու ներկային ծանոթացող յուրաքանչյուր մարդու. ինչպե՞ս կարողացավ ապրել մի ժողովուրդ, որն իր ամբողջ պատմության ընթացքում այնքան շատ թշնամիներ ուներ, դաժան ու անողորմ թշնամիներ, և այնքան քիչ բարեկամներ»[1]:

«Զրուցարանն» առաջին անգամ լույս է տեսել երկու հատորով (1987 թ. և 1988 թ.): Ընդառաջելով ընթերցողների ցանկությանը՝ այն սեղմվել է մեկ հատորի մեջ, կատարվել են շտկումներ, լրացումներ ու հրատարակվել 1991 թվականին:

Գրքի մասին «Գրքի պատգամաց» ընդարձակ գրախոսականով հանդես եկավ Գ. Էմինը «Սովետական Հայաստան» թերթում. «Զրուցարան» գիրքն ինքնին օգտակար ու գրավիչ լինելով հանդերձ՝ լրացնում է այն մեծ բացը, որ ստեղծվել է մի կողմից գիտականորեն խիստ արժեքավոր, ընթերցող լայն խավերին ոչ այնքան մատչելի գրքերի ու աշխատությունների, մյուս կողմից՝ հայոց պատմության այն տարրական անգիտության միջև, որ տարիներ շարունակ առաջադրել է նրա դասավանդումը»[2]: Գ. Էմինը խորհուրդ է տվել հրատարակչությանը, որպեսզի գիրքը վերահրատարակելիս այն օժտել համապատասխան լուսանկարներով, մանավանդ քարտեզներով, որոնց կարիքը խիստ զգացվում է:

Բ. Ուլուբաբյանի՝ հայոց պատմությանը նվիրված հոդվածները, լինելով գիտականորեն ստույգ, բայց միաժամանակ ընթերցողներին մատչելի ու գրավիչ, սոսկ հոդվածներ չեն, այլ էսսեներ, կամ ինչպես ինքը՝ հեղինակն է բնորոշում «Զրուցարանի» առաջաբանում՝ պատմական-գեղարվեստական ակնարկներ:

«Զրուցարանը» («Արևիկ» հրատարակչության կողմից լույս ընծայված) էսսեների մի ժողովածու է, հայ ժողովրդի ողբերգական ու հերոսական պատմությունը՝ նրա կազմավորման օրերից սկսած մինչև Սարդարապատի ճակատամարտը: Այն իրավամբ կարելի է Ճ. Ճահնուրի խոսքերով կոչել «պատկերազարդ պատմություն հայոց»: «Զրուցարանի» երկրորդ հատորը նվիրված է վերածընված Հայաստանի պատմությանն ու մշակույթին:

Թեև պատմաբանը մեր ժողովրդի՝ հազարամյակների տառապանքներով ու սխրանքներով, կորուստներով ու վերագտնումներով լի պատմությունից իր զրույցների համար ընտրել է ընդամենը երեք տասնյակ թեմա, սակայն գիրքը

տարբեր հարցերի գումարից կազմված ակնարկների բնույթ չունի: Հատուկ ընտրված առանցքային հարցերը գիտական առումով լուրջ խնդիրներ են:

Կիմ Ղահրամանյանը «Սովետական դպրոց» թերթում հանդես եկավ «համարձակ ու գրավիչ գիրք» գրախոսականով, որը, բարձր գնահատելով Բ. Ուլուբաբյանի անմոռանալի վաստակը, գրել է. «Այս գիրքը սովորական պատմություն չէ՝ փաստերի սիստեմատիկ շարադրանքով: Հեղինակը մեր պատմության հազարամյա հյուսվածքի մեջ փնտրել է մեր ժողովրդի կենսունակության արմատները, իր զրույցների համար նյութ է դարձրել այն էջերը, որոնք հենվելու կետեր են եղել, դարձել են մեր ազգային գոյության հիմքերը»[3]:

Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանը «Զրուցարան» գրքի մասին դրվատանքի խոսք ասաց. նրա «Պատմության դասերը» հոդվածը լույս տեսավ «Գրական թերթում», որտեղ ընդգծված է. «Շարադրանքում հմուտ պատմաբանի կողքին ընթերցողը տեսնում, զգում է գրող Ուլուբաբյանին: Գրողի ներկայությունը գրքում բնավ չի նվազեցնում ներկայացված պատմության գիտականությունը, առարկայականությունը: Գրողն այս դեպքում շահեկանորեն լրացրել է գիտնականին, և շարադրանքը գիտականության հետ միասին ձեռք է բերել վարակիչ ջերմություն, բացառիկ նպատակաուղղվածություն»[4]:

ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը մեծ գոհունակությամբ է խոսել «Զրուցարանի» մասին: Նրա «Բ. Ուլուբաբյանի «Զրուցարանը»» գրախոսականը տպագրվել է «Գարուն» ամսագրում[5]: «Այս բոլոր զրույցների մեջ, - գրել է Ս. Երեմյանը, - դարձյալ մենք տեսնում ենք իրեն՝ գիտնական-հետազոտողին, պրպտուն մարդուն, ազնիվ քաղաքացուն, ջերմ հայրենասերին, որը գիտակցում է և տեսնում «նորոգ Հայաստանը՝ դարեր երազած խաղաղությամբ և ստեղծագործական եռուզեռով»:

«Զրուցարանը» հասցեագրելով միջին ու բարձր դասարանցիներին՝ հեղինակը ընտրել է նյութի շարադրման գրավիչ ու շահեկան եղանակ: Նա բացում է մտերմիկ զրույց մեր պատմության ամենանվիրական թեմաների շուրջ և աննկատելիորեն ընթերցողին իր հետ տանում գիտական որոնումների, ստուգումների և ճշտումների ուղիով: Ընթերցողին թվում է, թե ինքն էլ մասնակից է գիտական բանավեճերի, ինքն անձամբ է ծանր ու թեթև անում առկա փաստերը, հանգում որոշակի հետևությունների: Այս առումով գրքի արժեքը կրկնակի բարձրանում է, քանի որ «Զրուցարանը» ոչ միայն դասեր է տալիս, այլև պատմագիտական հետազոտության կարողություններ է մշակում, վարակում գիտական բարեխղճությամբ:

ՇՆՈՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զրուցարան, Երևան, 1991, էջ 3:
2. «Սովետական Հայաստան», 1987, 18 սեպտեմբերի, թիվ 36:
3. «Սովետական դպրոց», 1987, 21 մայիսի, թիվ 21:
4. «Գրական թերթ», 1987, 13 հունիսի, թիվ 25:
5. «Գարուն», 1987, թիվ 11, էջ 94.